Հաւատացեալ մը ի՞նչպէս կը մարդագործէ ի՛ր և ուրիշին գործած բամբասանքները: Նուիրումի և տառապանքի հնոցին մէջ առաւելաբար, ուր կը մարդագործուի և կը վերընձիւղի հաւատքի ոգին: Թէ՛ հաւատքը և թէ՛ արուեստը սուրբ և վսեմ են, և անոր սպասարկուները՝ պարկեշտ և մարդակենցաղ ըլլալու են: Կայ չարութիւն, կայ մեղանչում և այլասերում, բայց կայ նաեւ ստեղծագործութիւն, և բարձր ոլորտ, և աղօթք, և սրբութիւն, և մարդութիւն:

Երբ եկաւ Սուրբ Հոգին, հաւատացեալները եղան համակ հաւատք, քաջութիւն, ծանաչում, խօսք և սէր: Հաւատացեալը երբ վերջապէս հասնի լոյսի Ակնաղբիւրին՝ Յիսուսի, անզգոյշ թիթեռնիկներու պէս չի՛ մոխրանար անոր բոցին մէջ, այլ կը սրբանայ և կը ստանայ յաւիտենական կեա՛նք:

ԱԼԷՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՆԿԱՐՆԵՐՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ ԱՂՕԹՔԸ

Առարկութիւն — Անգամ մը տեսայ, որ հայ քրիստոնեայ մը նկարի մը կ'աղօթէր: Այսպիսի սովորութիւն մը խոտոր կը համեմատի Աստուածաշունչի ուսուցման:

Հայ քրիստոնեաներ նկարներուն չեն աղօթեր: Թերեւս հայ հաւատացեալներ տեսած էք, որոնք նկարներու դիմաց կ'աղօթեն, բայց ո՛չ թէ նկարներուն: Աղօթքը կ'ուղղուի Քրիստոսի, եւ կամ ալ նկարով պատկերուած սուրբին բարեխօսութեան կը դիմուի: Նկարի մը աղօթելը նախապաշարումի համազօր մեղք մըն է, որ կը դատապարտուի Հայ Եկեղեցւոյ կողմէ:

digitised by A.R.A.R.@